ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընդունվել և ուսումնասիրվել են կրթության, գիտության ոլորտի կազմակերպություններից և նախարարության ստորաբաժանումներից 2021թ. բյուջեի հայտեր, ամփոփվել և կազմվել են ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունների հավելվածը, կապիտալ ծախսերի հավելվածները
2. Կազմվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ 1-ին կիսամյակի կատարողական/վերլուծական հաշվետվությունը (մուտքագրվել է LS FINANCE էլեկտրոնային համակարգ), ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող ծրագրերի՝ 2020թ. 1-ին կիսամյակում նախատեսված բյուջետային հատկացումների և սահմանաքանակների չիրացման վերաբերյալ բացատրագիրը
3. Կատարվել են հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերի վերահաշվարկներ (հաշվի առնելով 2020-2021թթ. ուսումնական տարվա ընդունելությունը և 1-ին կիսամյակում հեռավար ձևով ուսուցումը)
4. Իրականացվել են աշխատանքներ՝ պետական հանրակարթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման նոր բանաձևի մշակման համար
5. Կատարվել են համապատասխան աշխատանքներ գանձապետական հաշիվների կառավարման Client Treasury էլեկտրոնային համակարգում
6. Ուսումնասիրվել և վերլուծվել են կրթության, գիտության ոլորտի կազմակերպությունների ընթացիկ հաշվետվությունները, պատրաստվել են և ներկայացվել են հաստատման համապատասխան ֆինանսավորման հայտեր («Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ)
7. Կատարվել են մի շարք հաշվարկներ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կապիտալ ծախսերի իրականացման համար (պատրաստվել են ամփոփ տեղեկանքներ, պրեզենտացիաներ)
8. Պատրաստվել են ՀՀ կառավարության որոշման նախագծեր՝ 2020 թվականի պետական բյուջեի վերաբաշխման միջոցով կապիտալ ծախսերի իրականացման համար (ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N 1128-Ն որոշում, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի N 1461-Ն որոշում, ՀՀ

կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 1519-Ն որոշում, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 24-ի N 1589-Ն որոշում), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը (ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 30-ի N 1275-Ն որոշում):

9. Պատրաստվել են մի շարք հրամաններ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով համապատասխան ծրագրերի շրջանակներում իրավաբանական անձանց սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման գործընթացի պատասխանատու ստորաբաժանումների ցանկը հաստատելու մասին» N 12-Ա/2 հրամանում լրացումներ և փոփոխություններ (հրամանի համարն է՝ N 1282-Ա/2, 23.09.2020թ.), ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղարի տեղակալի 2020 թվականի հունվարի 17-ի ««ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը հատկացված միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացներն իրականացնելու նպատակով պատասխանատու ստորաբաժանումներ, գնումների համակարգող և գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցը հաստատելու մասին» N 01-Ա/3 հրամանում մի շարք փոփոխություններ և լրացումներ (հրամաններ՝ 01.07.2020թ. N 148-Ա/3, 03.07.2020թ. N 151-Ա/3, 06.07.2020թ. N 154-Ա/3, 09.07.2020թ. N 163-Ա/3, 27.07.2020թ. N 205-Ա/3, 30.07.2020թ. N 218-Ա/3, 10.08.2020թ. N 238-Ա/3, 25.08.2020թ. N 252-Ա/3, 28.08.2020թ. N 257-Ա/3, 09.09.2020թ. N 261-Ա/3), ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղարի տեղակալի 2020 թվականի սեպտեմբերի 16-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից հատկացվող միջոցների շրջանակներում կորոնավիրուսային հիվանդության պայմաններում ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման համար պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող սահմանելու մասին» N 262-Ա/3 հրամանը

Բացի վերը նշված աշխատանքներից իրականացվել է նաև.

- Աշխատանք Armeps և PPCM համակարգերում (վճռված արձանագրությունների ստուգում և հաստատում/մերժում, աշխատակարգային տվյալների կցում համապատասխան բաժիններին, պայմանագրերի, ԳՊ փոփոխման հայտերի ստուգում և հաստատում և այլն):
- Կազմվել են մի շարք գրություններ, կատարվել մի շարք հանձնարարականներ (ՀՀ վարչապետի, ՀՀ Ազգային Ժողովի, ԱԺ առանձին պատգամավորների, ՀՀ ֆինանսների նախարարության և այլ պետական մարմինների), տրամադրվել է

պահանջվող տեղեկատվություն համապատասխան մարմիններ և կազմակերպություններ, կատարվել են այլ աշխատանքներ:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝ ՍՈՖԻԱ ՍԱՐԳՍՅԱՆ

«16» «հոկտեմբերի» 2020թ.